

ՆՈՐԿԵՆՏ ԾՐԱԳՐԻ ԸՆԹԱՑՔԸ ՇԻՐԱԿԻ Մ.ՆԱԼԲԱՆԴՅԱՆԻ ԱՆՎԱՆ ՊԵՏԱԿԱՆ ՀԱՄԱԼՍԱՐԱՆՈՒՄ

ՇՊՀ ՆՈՐԿԵՆՏ ծրագիրը մեկնարկել է 2017 թվականի հունվար ամսից: Ծրագիրն արդեն իսկ ամփոփել է երկու փուլեր, այժմ ընթացքի մեջ է գտնվում Ծրագրով նախատեսված երրորդ փուլը:

Ծրագրի շրջանակներում բուհի ոչ գումարային ներդրումների միջոցով իրականացվել է դասընթացների և աշխատակազմի համար համապատասխան տարածքների հատկացում և վերանորոգում: Ավարտվել են սինխրոն թարգմանության սարքավորումների, հեռուստակոնֆերանսի համակարգի, համակարգչային ծրագրերի, համակարգչային այլ սարքավորումների մատակարարումը և ցկյանս կրթության կենտրոնի, մեկ ռեսուրս կենտրոնի և աշխատասենյակի կահավորումը:

Ծրագրի շրջանակներում անհատ խորհրդատուի կողմից պարտասրվել է էլեկտրոնային ուսուցման համակարգի պատրաստում:

Առաջիկայում նախատեսվում է իրականացնել հեռուսուցման դասընթացի ուսումնական նյութերի մշակում, որից հետո կմեկնարկի հեռուսուցման դասավանդումը 60 շաբաթուրթի համար:

Փետրվարի 2-ին Շիրակի պետական համալսարանում ԿԾԿ ԾԻԳ-ի և ԿԳՆ ներակայացուցիչների կողմից իրականացվեց Ծրագրով իրականացված աշխատանքների մշտադիտարկում: Դրա արդյունքում ամրագրվեց, որ դահլիճի, հարակից տարածքի, ինչպես նաև ռեսուրս-կենտրոնների վերանորոգումն ու կահավորումը ավարտված է:

Ներկաները փաստեցին, որ նյութատեխնիկական բազայի հարստացումը, կրթական նոր տեխնոլոգիաների ներդրումը, համագործակցային ցանցի ստեղծումն ու ընդլայնումը կնպաստեն բուհի ՇՊՀ հզորացմանը և մատուցվող կրթական ծառայությունների բազմազանեցմանը:

ՇՊՀ ՆՈՐԿԵՆՏ Ծրագրի չորրորդ փուլը կմեկնարկի մարտի 1-ից:



